**2024-2025 ՈՒՍՏԱՐԻ**
**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**
**9 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Տևողությունը՝ 90 րոպե:
Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:
Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:
Ճիշտ պատասխանը գնահատվում է 1 (մեկ) միավոր:

**1.Քանի՞ հրթիռ ունի ԶՓ հակատանկային հրթիռային համալիրը.**
1. 12 2. 10 3. 18 4. 24

**2.ՀՀ մայր օրենքը սահմանում է. «որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության…».**
1. Փրկությանը 2. Պահպանությանը 3. Ազատությանը 4. Պաշտպանությանը

**3.Զորամրցումներից մեկի ժամանակ Մենուա արքան իր Արծիբի նժույգով քանի՞ կանգուն է ցատկել.**
1.22 կանգուն 2.25 կանգուն 3.12 կանգուն 4.15 կանգուն

**4.Նշվածներից ո՞րը ավտոմատի հետադարձ մեխանիզմի մաս չէ.**
1.շարժական ձող 2.նետիչ 3.ուղղորդիչ ձող 4.Կցորդիչ

**5.Ի՞նչ ֆունկցիա է կատարում փակաղակը.**
1. Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
2. Փակաղակը փամփուշտը մղում է փողանցք, այնուհետև փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
3. Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փամփշտանոցը, հարվածում է պարկուճին և փողից հանում է փամփուշտը:
4. Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է գնդակը:

**6.Նշվածներից ո՞րը կարող է զգալի ազդեցություն ունենալ դիպուկ կրակոցի վրա.**
1.Հրաձիգի շնչառությունը 2.Հարձիգի լսողությունը
3.Հարձիգի դիրքավորումը 4.Հրաձիգի մտածողությունը

**7. Ինչքա՞ն է հակատանկային ականների քողարկիչ շերտի հաստությունը.**
1. 3-5 սմ 2. 5-8 սմ 3. 8-12 սմ 4. 1-2 սմ

8. **Քանի՞ անգամ կարող են նվազեցնել հարվածային ալիքի, լուսային ճառագայթման ազդեցությունը պարզագույն թաքստոցները.**
1.6-7 անգամ 2.9-10 անգամ 3.7-8 անգամ 4.1,5-2 անգամ

9. **Որքա՞ն մարդ է զոհվել 1878 թվականին Չինաստանում Խուանխե գետի ջրհեղեղի հետևանքով.**
1.8 մլն 2.7 մլն 3.7.5 մլն 4.9 մլն

**10.Նշվածներից ո՞ր պետական մարմինն է իրականացնում բնակչության պաշտպանության ընդհանուր ղեկավարումը արտակարգ իրավիճակներում.**
1.ՀՀ ճգնաժամային կառավարման ակադեմիան
2.ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը
3.ՀՀ կառավարությունը
4.ՀՀ ազգային ժողովը

**11. Ո՞վ է ժամապահը.**
1.պահակակետը զենքով հսկողն է,
2.զինված պահակայինն է, որը պահպանում և հսկում է պահակակետը,
3.զինված պահակայինն է, որը կատարում է պահակակետը պաշտպանելու հանձնարարություն,
4.այն զինված պահակայինն է, որը կատարում է իրեն հանձնարարված պահակակետը պահպանելու և պաշտպանելու մարտական առաջադրանքը:

**12. Համապատասխանացնել ճակատամարտերի տարեթվերը.**

1. Բաշ-Ապարան ա. մայիսի 26
2. Ղարաքիլիսա բ. մայիսի 25-27
3. Սարդարապատ գ. մայիսի 24- 28
4. Ավարայր դ. մայիսի 22-28

1. 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ:
2. 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա:
3. 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ:
4. 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ:

**13. Համապատասխանացնել տարեթվերը Հայաստանի Առաջին հանրապետության զինվորական նախարարների պաշտոնավարման հետ.**

| | |
|---|---|
| ա) Հովհաննես Հախվերդյան | 1. 1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր |
| բ)Քրիստափոր Արարատյան | 2. 1919-1920թթ. ապրիլ |
| գ)Ռուբեն Տեր-Մինասյան | 3. 1918թ. հունիս-1919թ. մարտ |
| դ)Դրաստամատ Կանայան | 4. 1920թ. ապրիլ-նոյեմբեր |

**1.**Ա-1, Բ-2, գ-3, դ-4,
**2.**Ա-2, Բ-3, գ-2, դ-1,
**3.**Ա-2, Բ-1, գ-4, դ-3,
**4.**Ա-3, Բ-2, գ-4, դ-1:

**14. Համապատասխանեցնել ըստ թագավորությունների.**

| | |
|---|---|
| ա) Արքունական և մարզպետական զնդեր | 1. Արարատյան թագավորություն |
| բ) «Մատյան Գունդ», հետևակ, հեծելազոր | 2. Արտաշեսյան թագավորություն |
| գ) Հետևակ, հեծելազոր | 3. Արշակունյաց թագավորություն |
| դ) Հետևակ, հեծելազոր, մարտակառքեր | 4. Բագրատունյաց թագավորություն |

1. Ա-4, Բ-3, Գ-2, Դ-1,
2. Ա-1, Բ-2, Գ-3, Դ-4,
3. Ա-2, Բ-3, Գ-4, Դ-1,
4. Ա-3, Բ-4, Գ-1, Դ-2:

**15.Ինչպե՞ս է կատարվում զինվորական ողջույնը, եթե զինծառայողի ձեռքերն զբաղված են.**

1. Գլուխը շրջում է պետի կողմը,
2. Ազատում է ձեռքերը, այնուհետև կատարում է զինվորական ողջույն,
3. Շրջվում է դեմքով դեպի պետը,
4. Կանգնում է զգաստ:

16.Որքա՞ն է «ոսկի ժամանակի» տևողությունը.
17.Որքա՞ն է Տ-80 տանկի մարտալրակազմը.
18.Քանի՞ ռենտգեն է սուր ճառագայթահարումը (մարդկանց մեկանգամյա ճառագայթահարումը).
19.Քանի՞ քառակուսի մետր տարածք վարակվեց 1986թ. ապրիլի 26-ին Չեռնոբիլի ատոմակայանում տեղի ունեցած վթարի հետևանքով.
20. Հրամանատարի հրամանը չկատարելու դեպքում զինծառայողը, որպես կարգապահական տույժ, քանի՞ օրով է ուղարկվում է կարգապահական վաշտ.